ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ



ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ

Մարտի 7–10-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի եւ օրհնության խոսքից հետո ժողովի նիստերն ատենապետեց Արեւմտյան Եւրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Խաժակ արք. Պարսամյանը։

Ժողովին քննարկվեց Մայր տաճարի հիմնանորոգության եւ ամրակայման աշխատանքների ընթացքը։ Կատարված աշխատանքների վերաբերյալ հանգամանալից տեղեկություններ փոխանցեց Մայր Աթոռի վանական խորհրդի ատենապետ եւ լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանը։ Մայր տաճարի վերանորոգման նպատակով կազմակերպված հանգանակությունների եւ անհրաժեշտ միջոցների հավաքագրման ընթացքի մասին զեկույց ներկայացրեց ԱՄՆ արեւմտյան հայոց թեմի առաջնորդ եւ հանգանակության հանձնախմբի ատենապետ Տ. Հովնան արք. Տերտերյանը։

ԳՀԽ-ն ողջունեց կատարված աշխատանքները, կարեւորեց Մայր տաճարի հիմնանորոգությանն ուղղված ջանքերը եւ ներդրումները՝ հույս հայտնելով, որ այն առաջիկայում դռները կբացի բարեպաշտ ժողովրդի առջեւ։

Ժողովի ընթացքում զեկույցով հանդես եկավ նաեւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արք. Մաշալյանը, որը ներկայացրեց պատրիարքության առկա կացությունը։ Ամենապատիվ սրբազան հայրը տեղեկություններ փոխանցեց պատրիարքության հոգեւոր դասի, եկեղեցական կառույցների, ծխական համայնքների, կրթօջախների գործունեության վերաբերյալ։

Ժողովականներին Արցախի սրբավայրերի պահպանության ուղղությամբ Մայր Աթոռի կողմից իրականացվող աշխատանքների եւ առաջիկա ծրագրերի վերաբերյալ համապարփակ տեղեկություններ

ներկայացրեց Մայր Աթոռի՝ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի տնօրեն Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը։ Հայր սուրբն ընդգծեց, որ գրասենյակի գործունեության հիմնական նպատակն է հուշարձանների պահպանությամբ զբաղվող միջազգային կառույցների, պետական պատկան մարմինների, ինչպես նաեւ միջեկեղեցական կառույցների եւ քույր Եկեղեցիների ուշադրությունը հրավիրել Արցախի հուշարձաններին սպառնացող վտանգների եւ դրանց պահպանությանն ուղղված ծրագրերի անհրաժեշտության վրա։ Գրասենյակի գործառույթն է նաեւ տրամադրել գիտական աղբյուրների վրա հիմնված տեղեկատվություն՝ կանխելու Ադրբեջանի կողմից Արցախի պատմական անցյալի եւ Արցախի հայկական հոգեւոր ու պատմամշակութային հուշարձանների պատկանելիության վերաբերյալ փաստերի խեղաթյուրումն ու կեղծ տեղեկատվության տարածումը։

Ժողովին Արշակ եպիսկոպոսը ներկայացրեց նաեւ Հայ Եկեղեցու հոգեւորականաց պատրաստության, թեմական եւ ծխական կյանքի կազմակերպման, սոցիալական, կրթադաստիարկչական, քրիստոնեական արժեհամակարգին նետված մարտահրավերների, ֆինանսատնտեսական վիճակի բարելավման եւ Հայաստան—Սփյուռք կապերի ամրապնդման առաքելության ուղենշային փաստաթղթերի վերաբերյալ զեկույցը։

Կարեւորելով ուղենշային փաստաթղթերի ձեւավորումը՝ ԳՀԽ-ն թելադրեց խմբագրական խորհրդին դրանք կազմող հանձնախմբերի հետ շարունակել փաստաթղթերի լրամշակման աշխատանքները։

Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորման (ՀԵՀԵՄ) հոգեւոր պատասխանատու Տ. Հովնան արք. Տերտերյանը ներկայացրեց ՀԵՀԵՄ Կենտրոնական գրասենյակի կողմից սույն թվականի մարտի 1—6-ը կազմակերպված ՀԵՀԵՄ Եւրոպայի տարածաշրջանային ֆորումի արդյունքները, որին մասնակցում էին ՀԵՀԵՄ Եւրոպայի տարածաշրջանի հայրապետական պատվիրակությունների, թեմերի եւ հովվությունների երիտասարդներ, թեմական առաջնորդներ։ Սրբազան հայրը կարեւորեց ՀԵՀԵՄ Կենտրոնական գրասենյակի եւ թեմերի երիտասարդական կառույցների ջանքերը՝ աշխարհասփյուռ հայ երիտասարդների համախմբման եւ առաջիկայում համահայկական ուխտագնացության կազմակերպման ուղղությամբ։

ԳՀԽ-ի անդամներին Եկեղեցի—պետություն հարաբերությունների եւ առկա մարտահրավերների վերաբերյալ զեկուցեց Մայր Աթոռ Սուրբ

էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը։ Արձանագրվեց, որ դեռեւս 2019 թ. Եկեղեցի—պետություն հարաբերությունների կանոնակարգման նպատակով ձեւավորված հանձնախմբի աշխատանքները տակավին վերականգնված չեն, եւ այս բնագավառում լուծման կարոտ են մնացել մի շարք խնդիրներ, մասնավորաբար՝ կրթական, մշակութային, արարողակարգային, օրենսդրական, հարկային, մաքսային եւ կարեւորագույն այլ ոլորտների հետ առնչված։

ԳՀԽ-ն մտահոգությամբ անդրադարձ կատարեց ռուս-ուկրաինական հակամարտությանը եւ Ուկրաինայի հայության առջեւ ծառացած մարտահրավերներին։ Այս առնչությամբ ժողովականներին զեկույց ներկայացրեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը։ Սրբազան հայրն ընդգծեց, որ Վեհափառ Հայրապետն այս օրերին մշտական կապի մեջ է Ուկրաինայի եւ Եւրոպական երկրներում Հայ Եկեղեցու թեմական առաջնորդների հետ՝ տեղեկանալով տիրող իրավիճակին եւ Ուկրաինայի հայ համայնքի ու Եւրոպական տարբեր երկրներում հանգրվանած հայորդիների կարիքներին։ ԳՀԽ անդամներն աղոթեցին տարածաշրջանում հակամարտության շուտափույթ ավարտի եւ խաղաղության հաստատման համար։

ԳՀԽ ժողովին քննարկվեցին նաեւ Եկեղեցու կանոնական ու հովվական կյանքին, կարգապահական ու իրավական հարցերին, կրթական ու սոցիալական ծրագրերին եւ Եկեղեցու առաքելության արդյունավորմանը վերաբերող հարցեր։

Ժողովի վերջում ներկայացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2021 թ. գործունեության տեղեկագիրը։ Դրանց շրջանակում արձանագրվեց, որ անցած տարում իրականացվել են մշակութային, հոգեւոր-քարոզչական, կրթական, սոցիալական ծրագրեր՝ ՀՀ զինված ուժերում, քրեակատարողական հիմնարկներում, կրթական ու մշակութային հաստատություններում եւ համայնքներում։

Քառօրյա ժողովն ամփոփվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության եւ գնահատանքի խոսքով։